ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ

20.12.2024 **Էջմիածին**

2024 թվականի դեկտեմբերի 20-ին, ժամը 11-ին Վաղարշապատի համայնքապետարանի «Մակար Եկմալյանի անվան թիվ 1 երաժշտական դպրոց» ՀՈԱԿ-ի շենքում /հասցեն՝ ք. Էջմիածին Կոմիտասի հրապարակ 0 շենք/ կայացավ <<Լիլանարմ>> ՍՊԸ-ի կողմից՝ ՀՎՀՀ 00433589, գրանցման համար 27811002926/2000-09-20 հասցեէ ք.Երևան, Նուբարաշեն 12փ. 4շ. 6բն. «Վաղարշապատի Մովսես Խորենացու անվան թիվ 10 հիմնական դպրոց>> ՊՈԱԿ-ի» հասցե՝ Արմավիրի մարզ, Վաղարշապատ համայնք ք.Էջմիածին, Զվարթնոց թաղամաս Տեր-Գաբրիելյան փող., թիվ 20 հասցեում նախատեսվող դպրոցի կառուցման նախագծային փաստաթղթերի վերաբերյալ հանրային քննարկում /1-ին փուլ/:

Ելույթներ.

Բացման խոսքով հանդես եկավ Վաղարշապատ համայնքի քաղաքաշինության և հողաշինության բաժնի պետի տեղակալ Վասպուրական Դավթյանը:

Վ. Դավթյան – Ողջունելով ներկաներին քաղաքաշինության և հողաշինության բաժնի պետի տեղակալը նշեց, որ Զվարթնոց թաղամաս Տեր-Գաբրիելյան փող., թիվ 20 հասցեում նախատեսվող դպրոցի կառուցման նախագծային փաստաթղթերի վերաբերյալ հանրային քննարկման մասին հանրության իրազեկվածությունն ապահովելու նպատակով հայտարարություններ են տրվել 3000 և ավելի տպաքանակ ունեցող «TVալիք» թերթի 25.01.2024թ. հերթական՝ 5-րդ համարում, Վաղարշապատի համայնքապետարանի տեղեկատվական հարթակներում, միևնույն ժամանակ հայտարարությունը փակցվել է համայնքապետարանի վարչական շենքի առաջին հարկի, ինչպես նաև համայնքի վարչական տարածքում տեղակայված հայտարարությունների տախտակների վրա:

Վ.Դավթյանը ներկայացրեց, որ նախատեսվում է կառուցել դպրոց՝ նախագծի մանրամասները ներկայացնելու համար խոսքը փոխանցելով ճարտարապետ Արփինե Մելքոնյանին:

Ա. Մելքոնյան - Նախագծի ճարտարապետ Արփինե Մելքոնյանը հանրային քննարկման մասնակիցներին ներկայացրեց, որ դպրոցը կառուցվելու է միջազգային չափանիշներին համապատասխան, հարմարեցված է լինելու նաև շարժունակության խանգարումներ ունեցող երեխաների համար՝ լինելու են թեքահարթակներ և վերելակներ:

«1-ին հարկում տեղակայումը կլինի ըստ դասարանների, նախատեսված է տնօրենի աշխատասենյակ իրենց ընդունարաններով, աշխատանքի ուսուցման կաբինետ, և բժշկի սենյակ, հաշմանդամություն ունեցող երեխաների անհատական պարապմունքների կաբինետ, սպորտային դահլիճ՝ կից հանդերձարաններով և մարզիչի սենյակ, սանհանգույց ճաշարան և օծանդակ սենյակներ: 2-րդ հարկում լեզվի կաբինետ, հաշմանդամություն ունեցող երեխաների համար անհատական պարապմունքների կաբինետ, ուսուցչանոց կենսաբանության և քիմիայի մասնագիտացված դասասենյակներ իրենց կից լաբարատորիաներով, ֆիզիկայի մասնագիտացված դասասենյակ՝ կից լաբարատորիայով, ռազմագիտության դասասենյակ, հանդիսությունների դահլիճ՝ իր սպասարկման սենյակների խմբով, սանհանգույցներ և այլ օժանդակ սնյակներ ու տարածքներ: Նախատեսվում են արևային վահանակներ դպրոցի տանիքին: Դպրոցում նախատեսվում է ընդհանուր օդափոխության համակարգեր և ջեռուցում: Շինարարության ավարտին նախատեսված է նաև տարածքի բարեկարգում: Շինաշխատանքները կազմակերպվելու են անվտանգության նորմերին համաձայն, շին-մոնտաժային աշխատանքները կատարվելու են պահպանելով շինարարական նորմերը, կանոնները, ստանդարտները և նախագծի տեխնիկական պայմանները: Նախատեսվող գործունեության իրականացման ժամանակ շրջակա միջավայրի վրա հնարավոր է որոշակի բացասական ազդեցություն, որոնց համար կիրառվելու են մեղմացնող միջոցառումներ: Օդի աղտոտման համար պարբերաբար կջրցանվի փոշոտ շինհրապարակը, շինարարության ընթացքում հնարավոր է աղմուկ և թրթռումներ, աղմուկը չի գերազանցելու նորմայի սահմանները, շինտեխնիկան ապահովված է լինելու խլացուցիչներով, աշխատանքները իրականացվելու են ցերեկային ժամերին: Շինարարական աղբը շինհրապարակից պարբերաբար կհեռացվի տեղական ինքնակառավարման մարմինների կողմից հատկացված

վայրը՝ ծածկով ապահոված բեռնատարներով: Շինարարությունը նախատեսվում է 650 օր»- նշեց ճարտարապետը:

Հարցեր, դիտողություններ, առաջարկություններ

Վ.Դավթյան- Վաղարշապատի համայնքապետարանի քաղաքաշինության և հողաշինության բաժնի պետի տեղակալ Վասպուրական Դավթյանը առաջարկեց շինարարության աշխատանքային ժամերը հստակեցնել, քանի որ թաղամասի ներսում է իրականացվելու:

Ք.Գրիգորյան – ՀՏԶՀ բնապահպանության և սոցիալական բաժնի պետ Քնարիկ Գրիգորյանն ասաց, որ աշխատանքային ժամերը 9-ից 6-ն է, բայց ավելի աղմկոտ աշխատանքները կիրականացվեն 12-ից 4-ը:

Հավելյալ հարցերի բացակայության հիմքով քննարկումն ավարտվեց:

Հանրային լսումների արդյունքում մասնակիցները որոշեցին հավանություն տալ նախատեսվող գործունեությանը:

Հանրային լսման նախաձեռնող՝ << ԼԻԼԱՆԱՐՄ >> ՍՊԸ

Ներկայացուցիչ՝ Ա. Միրզախանյան

Հանրային լսման պատասխանատու

և արձանագրող՝ Վ. Դավթյան

«Շին-Կոմֆորտ» ՍՊԸ

Ճարտարապետ Արփինե Մելքոնյան

Արձանագրությանը կցված են հանրային լսման մասնակիցների ցանկը: